

## **ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆՈՒՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

Գանատայի Հայոց Թեմի Հայեցի դաստիարակութեան խորհուրդի կազմակերպութեամբ, Չորեքշաբթի, 27 Յունիս 2007-ին, Գինկսթընի մէջ տեղի ունեցաւ ուսուցչական համագումար մը, մասնակցութեամբ Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի՝ Սարաֆեան Նախակրթարանի եւ Բաստրմաճեան Երկրորդականի, Թորոնթոյի ՀՕՄ-ի Պապայեան Մանկապարտեզի եւ Գոլոլեան Երկրորդական վարժարանի, ինչպէս նաեւ Ս. Յակոբ Առաջն. Մայր եկեղեցւոյ Շաբաթօրեայ վարժարանի Հայերէն լեզուի դաստիարակներու եւ տնօրէններու:

Համագումարին բացումը կատարեց խորհուրդի անդամներէն Պրն. Յարութիւն Պերպերեան, որ խորհուրդի անունով բարի գալուստ մաղթեց համագումարի մասնակիցներուն եւ հակիրճ անդրադարձ մը ունեցաւ խորհուրդի ցարդ կատարած աշխատանքներուն:

Բացման խօսքի աւարտին, համագումարը անցաւ օրուան օրակարգի գործադրման: Պրն. Պերպերեան յաջորդաբար հրաւիրեց առաջին նիւթի զեկուցաբերները՝ Տիկին Յասմիկ Պապեան (Թորոնթոյէն) եւ Պրն. Միեր Գարագաշեան (Մոնթրէալէն), որոնք զեկուցեցին «Հայոց Պատմութեան Դասաւանդման» շուրջ, ա. Նախակրթարանի մէջ կիրարկուած ձեւերուն եւ նիւթերուն մասին, ք. Երկրորդականի մէջ գործադրուած նիւթերու մասին:

Չոյգ զեկուցաբերներէն ալ ամբողջական գիծերու մէջ ներկայացուցին իրենց տեսակետներն ու կիրարկման մեթոտները, որմէ ետք, տեղի ունեցան հարցումներ եւ զանազան կարծիքներու եւ գաղափարներու փոխանակում:

Ճաշի կարճ դադարէ մը ետք, Համագումարը շարունակուեցաւ երկրորդ նիւթով մը՝ «Օտար լեզուի ուսուցման թեքնիքի օգտագործումը՝ Հայերէնի դասաւանդութեան մէջ», զոր զեկուցեց Տիկ. Յուլիէ Շամլեան (Մոնթրէալէն): Այս զեկույցի աւարտին եւս, տեղի ունեցան զանազան հարցումներ, ինչպէս նաեւ կարծիքներու եւ գաղափարներու փոխանակում:

Սոյն համագումարը, ինչպէս եւ նախորդ տարեշրջանի համագումարը, ծառայեցին նախ կրթական հաստատութիւններու տնօրէններու եւ ուսուցիչներու փոխադարձ ծանօթացման ապա եւ ամենէն կարելորդ Հայերէն լեզուի եւ Հայոց պատմութեան դասաւանդման բարելաւման եւ նոր գաղափարներով ճոխացման առիթի:

Մեծապես գնահատելի եւ քաջալերելի Է Ազգային Առաջնորդարանի նախաձեռնութեամբ եւ Հայեցի դաստիարակութեան խորհուրդի կազմակերպութեամբ տեղի ունեցած այս միօրեայ համագումարները:

**ՄԱՍՆԱԿԻՑ ՄԸ**